ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 03-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 12 սեպտեմբերի 2020թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ N 1332-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), Որոշման հավելվածի 1-ի 69-70 կետերը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ N02-Ա որոշմամբ հաստատված Հանձնաժողովի կանոնադրությունը, ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 10-ի 1500-Ա որոշումը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 24-րդ ու 25-րդ հոդվածները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով).

որոշում է.

1. Հանձնաժողովի՝ հայտարարագրերի վերլուծության, ինչպես նաև կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի

վարչությունների աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը վերապահել ***Հանձնաժողովի անդամ Արամայիս Փաշինյանին***.

2. Հանձնաժողովի՝ վարույթների և իրավական ապահովման, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությունների աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը ***վերապահել Հանձնաժողովի անդամ Նարեկ Համբարձումյանին***.

3. Հանձնաժողովի՝ անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների, բարեվարքության և շահերի բախման, ինչպես նաև մեթոդական աջակցության վարչությունների աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը ***վերապահել Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանին.***

4. Հանձնաժողովի նախագահն ապահովում է սույն որոշման 1-3-րդ կետերով նախատեսված համակարգման ոլորտների գործունեության և աշխատանքների անխափան իրականացումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ